ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«08» օգոստոսի 2017 թ. թիվ 415-Ա

ՀՐԱՄԱՆ

«ՍԵՆԱՏՈՐ ՍՊՈՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սենատոր Սպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2017թ. հուլիսի 20-ի թիվ 03/24-1/13267-17 գրությամբ հարուցված վարչական վարույթի նյութերի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 13-ի թիվ 292-Ա հրամանի հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից իրականացված «Սենատոր Սպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2014թ. փետրվարի 04-ին տրված թիվ ԽՏ-004 խաղատան կազմակերպման լիցենզիայի պայմանների և պահանջների կատարման ստուգման արդյունքում 2017թ. հուլիսի 18-ին կազմված թիվ ԽՏ-01 ակտի՝ «Սենատոր Սպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը խախտել է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» և «ժգ» կետերի պահանջները:

Ղեկավարվելով «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «բ1» և «է» կետերով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 18-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «բ1» կետով սահմանված պահանջը խախտելու յուրաքանչյուր դեպքի համար «Սենատոր Սպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ (թվով երեք դեպք) ընդամենը վեց միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով սահմանված պահանջը խախտելու յուրաքանչյուր դեպքի (թվով մեկ դեպք) համար «Սենատոր Սպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

3. Նշանակված տուգանքը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գանձապետական 900005024154 հաշվեհամարին:

3. Նշանակված տուգանքը սույն հրամանն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո՝ ամբողջությամբ կամ մասամբ վճարված չլինելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA
02629081

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ